ԳԼՈՒԽ ՅԻԱ.

Համապատասխանութիւնք ժամանակի պատերազմի մնասցէ արձակ մէնջ զօրապետաց միայն, և պատգամատար ելցեն ընդ դրօշակաւ սպիտակ 'ի ձեռին, այս դրօշակս իցէ նշան ընդունելի պատգամաբերին և տանին ազատ, սա ինքն ընդ թղթաւ պատգամաւ իւրով մտցէ 'ի բանակ, ամենայն զիշերապահ և պահակք գտանելով սմայ պահպանութեամբ հասուցանեն 'ի բանակս իւրեանց, քող 'ի տեսակս կապեալ հասուցանեն 'ի դրունս զօրագլխին, նմանապէս պատասխան նամակին իւրոյ առցէ և քողաւորեալ աչօք ելցէ 'ի բանակէ և մտցէ առ բանակն թշնամւոյն։

ԳԼՈՒԽ ՅԻԲ.

Ով ոք 'ի մէնջ եթէ զինուոր, եթէ հասարակ ժողովուրդ 'ի ժամանակի պատերազմի, եթէ գուցէ հարկաւորութիւն ինչ գրել առ բարեկամ և ընտանին իւր, որում իցէ ընակեալ ներ կառավարութեան թշնամու, գրեցեալն իւր բացարձակ ընծայեսցէ առ զօրագլուխն մեր զի սա առաքեսցէ ընդ պատգամատարաւ իւրով առ քաղաքն, և կամ բերթն թշնամեաց և գտցէ պատասխան բացարձակ հանձնեսցի Տեառն իւրոյ